

25 SEP 2010

ԽՍՀՄ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՇՎԱՌՔԻ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ДОСТОПОВЕДЕНИЯ
Ленинградского
СССР

Կոլխոզի 1933 թվի տարեկան հաշվետվությունը կազմելու
վերաբերմամբ.

Սահմանված ձևով տարեկան հաշվետվություն կազմե-
լը պարտադիր է յուրաքանչյուր կոլխոզի համար:

Նախքան տարեկան հաշվետվություն կազմելուն ձեռ-
նարկելը, կոլխոզում պետք է անցկացվի կոլխոզի ամբողջ
գույքի վիճակի ստուգում: Այդ ստուգումը պետք է անց-
կացվի ճշտությամբ և ԽՍՀՄ Հողօրդրոմատից հաստատված
գույքի ցուցակագրման վերաբերյալ հրահանգին համապա-
ասխան:

Գույքի ցուցակագրման հետևանքների և կոլխոզային
հաշվետարվության տվյալների հիման վրա, կոլխոզի հաշվե-
տարները ձեռնարկում են տարեկան հաշվետվության կազ-
մելուն:

1933 թվի հունվարի 1-ից առաջ կազմակերպված
կոլխոզներում «Կոլխոզի տարեկան հաշվետվությունը
ից մինչև» վերնագրում
գրել՝ «1933 թվի հունվարի 1-ից», իսկ 1933 թվի հուն-
վարի 1-ից հետո կազմակերպված կոլխոզներում մատնա-
շել կոլխոզի կազմակերպման ամսաթիվը:

Տարեկան հաշվետվությունը յուրաքանչյուր կոլխոզի
կողմից կազմվում է յերեք որինակ. հաշվետվության յեր-
կու լցված բլանկները ներկայացվում են ՄՏԿ (յեթե կոլ-
խոզն սպասարկվում է ՄՏԿ կողմից), կամ Ռայհոդբաժնին

(յեթե կոլխոզը չի սպասարկվում ՄՏԿ կողմից), փորտեղից մի որինական ուղարկվում է Յերկ. (Մարզ.) Հողային Վարչությանը, իսկ յերկրորդը մնում է Ռայնոդբաժնի կամ ՄՏԿ գործերում. յերրորդ որինակը մնում է կոլխոզի գործերում:

Տարեկան հաշվետվության աղյուսակների լցնելը կատարվում է քանադով յեվ առանց փոյեվե ջնջումների յեվ ուղղումների: Դրա համար անհրաժեշտ է սկզբում լցնել մի որինակը, ստուգել բոլոր գրանցումներն ու հանրագումարները և միայն նրանից հետո, յերբ բոլորն ստուգված է և վերջնականապես ուղղված, անհրաժեշտ է արտագրել հաշվետվությունը մնացած որինակներում: Առաջին, բյանկը մեծ քանակությամբ ուղղումներով չփչացնելու համար, անհրաժեշտ է նյութի մշակման թվանշանների հաշվի և նրանց հաշվեկշիռն անելու ամբողջ նախնական աշխատանքը կատարել թղթի առանձին թերթի վրա: Տարեկան հաշվետվության բոլոր յերեք որինակները պետք է ստուգվեն հաշվելու միջոցով:

Տարեկան հաշվետվության բյանկի լցնելուն պետք է շատ ուշադիր և լուրջ վերաբերմունք ցույց տալ: Վորևե փնթի վերաբերմունք, զանցառում և դատարկ (չցված) սյունյակ չպետք է լինի: Այս կամ այն սյունյակների վերաբերմամբ կոլխոզում ցուցանիշներ չլինելու դեպքում, այդ սյունյակներն ընդգծվում են, բայց փոշ մի դեպքում չպետք է մնան չցված:

I. Ընդհանուր տեղեկություններ:

5-րդ կետում պետք է մատնանշվի տնտեսության առաջատար ճյուղը, որինակ՝ «հացահատիկ» կամ «ճակնդեղ» կամ «անասնաբուծություն», մատնանշելով նրա տեսակը՝ խոզաբուծություն և այլն:

7-րդ և 8-րդ կետերում անպայման թվարկվում են տվյալ կոլխոզում յեղած բոլոր ապրանքային ֆերմաները

34-10
Ca 997

ВИАКОУЗКА
ИСТИТУТА
ВОСТОЧНО-АФРИКАНСКИХ
ИЗУЧЕНИЙ
С С С Р

և արդյունաբերական—տնայագործական ձեռնարկությունները: 9-րդ կետում գրանցվում են միայն հաշվետու տարում իսկապես դոյություն ունեցող մշտական արտադրական բրիգադները: Բրիգադների մշտականությունը վորոշելու ժամանակ պետք է յեղնել հետևյալ հիմնական մոմենտներից՝ 1) բրիգադը համարվում է մշտական արտադրական, յեթե բրիգադում կոլխոզնիկների ընտրությունը կատարվել է արտադրական առաջադրանքին, նրա չափին և բրիգադին կցված արտադրության միջոցների չափին խիստ համապատասխան, 2) բրիգադի մշտականության մյուս սկզբունքը պետք է լինի նրա անփոփոխ կազմն առնվազն գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ սեզոնի ընթացքում: Յեթե կոլխոզում չկան մշտական արտադրական բրիգադներ, պետք է 9-րդ կետում, «բոլոր բրիգադները» 6-րդ հարցի դիմաց դնել «չկա»:

II. Կոլխոզի ազգաբնակչությունը.

Այս տեղեկությունները վերցվում են կոլխոզի անդամների հաշվառքի գրքից (ձև № 1) և ցույց է արվում հաշվետու տարվա վերջում յեղած դրությունը (1934 թ. հունվարի 1-ին): 3-րդ սյունյակում հաշվի յե առնվում ամբողջ փաստորեն աշխատունակ ազգաբնակչությունը, այսինքն՝ ներհաշված աշխատանքին մասնակցող ծերունիներին, անչափահասներին, նույնպես և արտագնացներին և այլ պատճառներով ժամանակավորապես բացակայողներին՝ կարմիր բանակ մոբիլիզացիայի յենթարկվածներին և ԲՈՒՀ-երի, տեխնիկումների, դպրոցների, դասընթացների ուսանողներին և այլն: Արտագնացների քանակի և արտագնացության մեջ նրանց լինելու մարդատմության թվի վերաբերյալ տեղեկությունները վերցվում են կոլխոզի արտագնացության մեջ գտնվող անգամների ցուցակից (ձև № 2): Կոլխոզնիկի արտագնացության մեջ գտնվելու չը-

լրացած ամիսը համարվում է լրիվ ամիս: 1933 թվին արտագնացության մեջ գտնվելու մարդա-ամիսների ընդհանուր գումարի վորոշելը (6-րդ կետ) կատարվում է ամբողջ հաշվետու տարվա ընթացքում արտագնացների թիվն ըստ ամիսների գումարելու միջոցով: «Գտնվել են արտագնացության մեջ աշխատողներ» 4-րդ սյունյակում մտցնել մինչև 1934 թվի հունվարի 1-ն արտագնացության մեջ գտնվող բոլոր կոլխոզնիկներին:

III. Կոլխոզի հողային ֆոնդը յեվ նրա ոգսագործումը 1933 թվին.

Հողային կալվածների կազմը փոխանցվում է կոլխոզի հողաշինարարության վերաբերյալ փաստաթղթերից: Կոլխոզնիկների մերձագարակային հողերը, վորոնք ծառայում են նրանց անհատական կարիքներին, չեն մուծվում կոլխոզի հողային ֆոնդի մեջ: 1933 թվին հողային կալվածներն ոգտագործելու վերաբերյալ սյունյակները լցվում են փաստացի տվյալների համաձայն (գյուղխորհրդին ներկայացրած վերջին հաշվետվությունից):

IV. Աւխորների ծախսեր մի տարում.

Լցվում է տնտեսության ճյուղերի վերաբերյալ աշխուրների հաշվառքի տեղեկագրի համաձայն (ձև № 40): Առանձին ճյուղերի հաշվարկված աշխուրերը դասավորելու ժամանակ մտցվում են համապատասխան սյունյակների մեջ այդ ճյուղերի սպասարկման համար հաշվարկված աշխուրերը (ջրկիրներ, խոհարարուհիներ և այլն):

Բրիգադիաների ոգտին հաշվարկված աշխուրերը գրել այն ճյուղի հաշվին, վորի մեջ աշխատում է բրիգադիան: Արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկություններին պետք է վերագրել դարբնոցում, նորոգման արհեստանոցներում, ավրադացում, բրդագործարանում և այլն հաշվարկված աշ-

խուրերը: Վարչա-տնտեսական անձնակազմին են վերաբերում վարչության ազատված անդամները, կոլխոզի հաշվային աղարատը, մառանապետները, վարչության սպասուհիները և պահապանները: Մի տարվա ընթացքում հաշվարկված աշխուրերի ընդհանուր թիվը պետք է հավասար լինի աշխուրերի հաշվառքի գրքով աշխուրերի հանրագումարի յենթարկված թվին (ձև № 39):

V. ՄՏԿ արտադրական սպասարկումը յեվ իրեն՝ կոլխոզի կողմից կատարված աւխասանները.

Լցվում է ըստ փաստորեն կատարված աշխատանքի, համաձայն ՄՏԿ-ից և կոլխոզի բրիգադիաներից ընդունված աշխատանքների արձանագրությունների (ձև № 28) և արտադրական պլանների կատարման վերաբերյալ բրիգադիաների ներկայացրած տեղեկանքների (ձև № 27): ՄՏԿ կողմից չսպասարկվող կոլխոզներն այդ աղյուսակը չեն լցնում:

VI. Համայնացված անասունների առկայությունը կոլխոզներում.

Լցվում է մինչև 1934 թվի հունվարի 1-ը յեղած գույքի ցուցակագրության տվյալների համաձայն: Մինչև 1933 թվի հունվարի 1-ն անասունների առկայության վերաբերյալ տեղեկությունները վերցվում են կամ հաշվետարական գրքերից (ձև № 3), կամ կոլխոզի 1932 թվի տարեկան հաշվետվությունից: «Այդ թվում՝ ֆերմաներում» սյունյակի մեջ գրանցվում է կոլխոզին պատկանող անասունների ընդհանուր թիվն այն մասը, վորը տրված է այն ֆերմային, վորի կազմակերպման համար կոլխոզը պայմանագիր է կնքել կոլխոզային ապրանքային ֆերմաների ռայոնական միավորման հետ:

VII. Կոլխոզի գույքը.

Աղյուսակը կազմվում է գույքի ցուցակով (ձև № 3), առանց մասնանշելու մինչև 1934 թվի հունվարի 1-ն առկա գույքի արժեքը: «Շարժիչներ» բաժնում ազատ տողում գրել նրանց այն տեսակները, վորոնք չեն մուծված աղյուսակում հիշված ցանկում: Առկա յեղած, բայց անվանակարգությամբ չնախատեսված գույքի տեսակները գրվում են աղյուսակի ներքին տողերում: 34—35 սյունյակներով հաշվի յեն առնվում գանազան սայլակներ միայն յերկաթե ընթացքով:

VIII. Կոլխոզիկների անհատական ցանկերը յեվ ապահովվածությունը կովերով.

Լցվում է գյուղխորհրդի տվյալների և կոլխոզի վարչության մեջ ունեցած նյութերի հիման վրա: Կոլխոզիկների չհամայնացված ցանքերին վերաբերում են մերձագարակային հողերում 1932 թվի աշնանը և 1933 թվի գարնանը կոլխոզիկների կողմից կատարված ցանքերը, կոլխոզիկներին պատկանող անասունների մասին տեղեկությունները վերցվում են մինչև 1934 թվի հունվարի 1-ը յեղած տվյալներով:

Այս աղյուսակում տեղեկություններ տրվում են միայն այն կոլխոզիկների անտեսությունների մասին, վորոնք իրենց անհատական ոգտագործման մեջ ունեն ցանքեր կամ անասուններ (կամ թե մեկը և թե մյուսը՝ միասին): Մասնավորապես, որինակ, յեթե կոլխոզում կա ընդամենը 50 անտեսություն, նրանցից 40 ունեն 40 կով, ապա այդ աղյուսակի 3-րդ սյունյակում պետք է գրել «40» (այլ վոչ թե 50):

IX. Շինություններ յեվ կառուցվացքներ.

Այս աղյուսակում հաշվի յեն առնվում միայն համայնացված շինություններն ու կառուցվածքները, այսին-

քըն՝ բնակելի և անտեսական շինությունները, իսկ կոլխոզիկներին պատկանող շինություններն այստեղ հաշվի չեն առնվում:

Այդ աղյուսակը լցնելու համար տեղեկությունները վերցվում են շինությունների և կառուցվածքների ցուցակից (ձև № 3): Չավարտված շինություններն ու կառուցվածքները չեն մուծվում տվյալ աղյուսակի մեջ:

1—7 սյունյակներում հաշվի յեն առնվում հատկապես անասունների այս կամ այն տեսակը պահելու համար հարմարեցված շինությունները, իսկ ընդհանուր անասնաբակերը վոչ մի կերպ չի կարելի վերագրել կովանոցներին կամ խոզանոցներին: Յեթե այդպիսի ընդհանուր անասնաբակեր կան կոլխոզում, ապա նրանց պետք է ցույց տալ ինքնուրույն կերպով, ջնջելով սյունյակներից մեկը և մակագրել «ընդհանուր անասնաբակ»:

X. Բուսաբուծության սրտադրանքը յեվ նրա բախումը.

Այս աղյուսակը հանդիսանում է հիմնական բոլոր կոլխոզների համար: Պլանով նախագծված մշակույթների ցանքի տարածությունը (2-րդ սյունյակ) վերցվում է արտադրական պլանից: Կոլխոզի փաստացի ցանքի տարածությունը (3-րդ սյունյակ) լցվում է կոլխոզի կողմից գյուղխորհրդին ներկայացրած վերջին հաշվետվության տվյալների հիման վրա: Բերքահավաքի տարածության մեջ ցույց է տրվում կոլխոզի կողմից փաստորեն հավաքած տարածությունը (այսինքն՝ ցանքի տարածությունը, փչացածը հանելուց հետո): Աշնանային ցանքի տարածությունը մուծվում է այդ սյունյակի մեջ նրա այն չափով, ինչ չափով նա պահպանվել է մինչև 1933 թվի գարունը: Կոլխոզ նոր մտածների համայնացված ցանքերը (4-րդ սյունյակ) մուծվում են ցանքերն ընդունելու արձանագրություն համաձայն: «Ընդհանուր հավաքը» սյունյակը (6) լցվում է

մթերքների և նյութերի շարժման հաշվառքի գրքի համա-
ձայն (ձև № 14): Ձևակազմած հաշվառման քանակը վերց-
վում է կոլխոզի գույքի ստուգելու համար կազմված հանձ-
նաժողովի արձանագրություններից: «Հանձնված է պե-
տությունը հարկի կարգով» (8), «փոխառությունների
վերադարձը» (9) և «ՄՏԿ բնավարձը» (10) սյունյակները
լցվում են մթերքների և նյութերի շարժման գրքի համա-
ձայն (ձև № 14), ֆոնդերին կոլխոզային արտադրանք հա-
կացնելու մասին 11—16 սյունյակները լցվում են վերջ-
նական բաշխման տվյալներով: 15 և 16 սյունյակներում
մատնանշվում են կոլխոզում լրացուցիչ կերպով կազմված
ֆոնդերի ցուցանիշները:

Աշխուրհների համաձայն կոլխոզիկների մեջ բաշխվելիք
արտադրանքի չափերը (17-րդ սյունյակ) սահմանվում են
բաշխման տվյալներով: Այստեղ մուծվում է ինչպես փաս-
տացի բաշխված արտադրանքը, այնպես և արտադրանքի
այն մասը, վորը բաշխված է, բայց կոլխոզիկների կողմից
դեռ չի ստացված: 18-րդ սյունյակում մուծվում են մինչև
1934 թ. հունվարի 1-ը յեղած բոլոր կանխիկ մնացորդնե-
րը, անկախ նրանից, թե հանդիսանում են արդյոք այդ
մնացորդները կոլխոզի արտադրանքը, թե այստեղ մուծված
են և կոլխոզի ամեն տեսակ կողմնակի յեկամուտները, ինչ-
պես և աշխուրհների համաձայն կոլխոզիկներին բաշխվելիք
արտադրանքը: Այդ սյունյակի համար տվյալները վերցվում
են մթերքների և նյութերի շարժման հաշվառքի գրքից և
կոլխոզի գույքի ստուգման հանձնաժողովի արձանագրու-
թյունից: «Բաշխված է և աշխուրհների համաձայն յենթակա
յե բաշխման, ներհաշված հասարակական սնունդը» սյու-
նյակում (17-րդ սյունյակ), հաշվի յե առնվում նաև կոլ-
խոզիկներին տրված թխված հացը: Այդ դեպքում աշխու-
րհների համաձայն հաշվառման բաշխված քանակին ավե-
լացվում է այն հաշվառման, վորը կոլխոզի կողմից բաց

և թողնված աղալու և ալյուրը հաց թխելու նախատեղով
հանձնելու համար:

XI. Անասնաբուծության արտադրանքի բաշխումը.

Լցվում է մթերքների և նյութերի շարժման հաշվառքի
գրքից (ձև № 14), շուկայում մթերքները վաճառելու վե-
րաբերյալ հաշվետվությունից (ձև № 21), մթերքներ տա-
լու տեղեկագրից (ձև № 22) վերցված տվյալներով: Տվյալ
աղյուսակը լցվում է միայն նատուրալ ցուցանիշներով:

«Յենթակա յեր հանձման» հարցերին պետք է մատ-
նանշել 1933 թվի պլանը, այսինքն՝ հանձնելու 15—ամսյա
պլանի և 32 թվի—IV-րդ յեռամսյակում հանձնված քա-
նակի միջև յեղած տարբերությունը, համապատասխան
կերպով «հանձնված է» սյունյակում ցույց տալ միայն
1933 որացույցային տարվա հանձնումը:

Չվերի հանձնումը ցույց է տրվում հատերով:

XII. Դրամական յեկամուտներ յեվ ծախսեր.

Լցվում է դրամարկղի հաշվառքի գրքի (ձև № 44) և
1933 թվի հունվարի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը
ժամանակամիջոցում ֆոնդերը և վարկերը ծախսելու հաշ-
վառքի գրքի (ձև № 47) համաձայն: Յենթահաշիվ կատա-
րելուց առաջ դրամարկղի գրքում մուտքի և յելքի յուրա-
քանչյուր հոդվածի դիմաց անհրաժեշտ է դնել աղյուսակի
տողերի համարները, վորից հետո կատարել իսկական
հաշիվը:

«Պետությունը վաճառելուց» սյունյակում մուծվում
են միայն հարկի կարգով կամ կոնտրակտացիայով պետու-
թյանն արտադրանք հանձնելուց ստացված դրամը:

«Այլ յեկամուտներ» 10-րդ տողում մուծվում են կոլ-
խոզի դրամարկղի բոլոր մնացած յեկամուտները, բացի
1—9 սյունյակներում նախատեսվածներից: «Ընդամենը

բոլոր դրամական յեկամուտները» 11-րդ սյունյակում պետք է մուծվի նաև բանկում հասարակ ընթացիկ հաշիվներում և առ 1/1—34 թվի կոլխոզի դրամարկղում յեղած մնացորդը:

9-րդ («ծախսված և կապիտալ ներդրումները համար» բաժնի) սյունյակում մուծվում են նաև մանր կապիտալ ծախսումների վրա կատարված գումարները:

Արտադրական և անտեսական կարիքների վրա արված ծախսերը չպետք է մուծվեն այդ աղյուսակի մեջ:

11-րդ սյունյակում ցույց է տրվում անցյալ տարի կապիտալ շինարարության համար վարկերով բանկից ըստացված ու ծախսված գումարը:

XIII. Կոլխոզի ընդհանուր յեկամուտը յեվ նրա բաժխումը դրամական արտահայտությամբ.

Դա—կոլխոզի անտեսական գործունեությունից հանրագումարը ցույց տվող կարեորագույն աղյուսակն է: Նրա լցնելու վրա պետք է դարձնել առանձին ուշադրություն: Բուսաբուծությունից և կենդանաբուծությունից հաշվետվական տարում ստացված կոլխոզի ամբողջ ընդհանուր արտադրանքը գնահատվում է իր անտեսության մեջ ծախսվածի և կանխիկ արտադրանքի մնացորդի մասում՝ պետական մթերոդ կազմակերպությունների գներով, իսկ վաճառվածի և իբր հարկ ու կոնսերվացիայով հանձնվածի մասում—վաճառման և հանձնման գներով: Կենդանաբուծության ընդհանուր արտադրանքի մեջ մտցվում են այս տարի ռեալականացման յենթարկված բոլոր անասունները (վաճառքը, մորթելը): Արգձեռնարկություններից ստացված յեկամուտի մեջ մուծվում է բոլոր ապրանքեղենի արժեքը, հանած իր հումքի արժեքը (կաթի, հացահատիկի), գումարած ուրիշի հումքի վերամշակումից ստացված յեկամուտը

և կողմնակի կերպով կատարված աշխատանքները (գույքի նորոգում և այլն), փաստացի վճարման համաձայն: Իրենց անտեսությունից մեջ ծախսված և կոլխոզնիկներին միջև բաշխված արդյունաբերական ապրանքեղենի գնահատումը կատարվում է պետական գներով: Վաճառված արդյունաբերական ապրանքեղենը գնահատվում է նրանց փաստացի վաճառման գնով:

Ստույգ անասունների և այրված շինությունների համար ստացված ապահովագրական պրեմիաները, նույնպես և անպետք գույքի վաճառքից ստացված գումարները յեկամուտի մեջ չեն մուծվում:

Յեկամուտի մնացած հոդվածները (9, 13—18 կետերը) գրվում են մուտքի մեջ փաստացի ստացածի համաձայն: Յեկամուտի բաշխումը բաժնում, սերմային, կերային և ապահովագրական ֆոնդերի արժեքը (24—26 կետեր) հաշվարկվում է պետական մթերոդ կազմակերպությունների գներով: Ծախսված այրելու և քսելու նյութերի արժեքը վորոշվում է պետական կամ կոոպերատիվային առևտուր անող կազմակերպությունների բաց թողման գներով: Այդ աղյուսակի մնացած յեղքի հոդվածները լցվում են փաստորեն կատարված ծախսումների համաձայն: 51-րդ սյունյակը լցվում է վերջնական բաշխման վերաբերյալ տվյալների հիման վրա, աշխուրների համաձայն բաշխվելիք հացը, կարտոֆիլը և այլ մթերքները վերածելով դրամի՝ պետական մթերոդ կազմակերպությունների գների համաձայն: Աշխուրների համաձայն բաշխվելիք կոլխոզային արտադրանքը (X և XI-րդ աղյուսակներ) բաժանվում է աշխատած աշխուրների ընդհանուր քանակի վրա (IV-րդ աղյուսակ) և այս ճանապարհով ստացվում են աշխուրի բնական գնահատման ցուցանիշները (տվյալ աղյուսակի 56 և 57 կետերը):

XIV. Կոլխոզի գույքային հաշվեկշիռը.

«Կոլխոզի գույքային հաշվեկշիռը» աղյուսակը պարտադիր կերպով կազմվում է միայն այն կոլխոզներում, վորոնք վարում են կամ 1934 թվի սկզբից անցնում են հաշվետարության կրկնակի սխտեմին: Բայց բոլոր մնացած կոլխոզները, վորոնք 1934 թվի հունվարի 1-ից մնում են հաշվառքի հատարակ սխտեմի վրա, լցնում են գույքային հաշվեկշռի միայն հետևյալ հոդվածները՝ ձախ մասում—1, 2, 3, 4, 30, 31, 32, 33, աջ մասում—1, 2, 3, 4, 5, 6, 15, 16, 17 և 18:

Կոլխոզի ֆինանսա-տնտեսական վիճակը մինչև 1934 թվի հունվարի 1-ը սահմանվում է կոլխոզի ամբողջ գույքի և այլ միջոցների, նրա պարտքերի և կոլխոզին վճարելիք պարտքերի, կազմակերպությունների և անձերի հետ ունեցած նրա հաշիվների ստուգման նյութերի հիման վրա, ստուգում, վորը կատարվել է կոլխոզի վիճակի ստուգող հատուկ հանձնաժողովի, վերաստուգիչ հանձնաժողովի և կոլխոզի վարչության կողմից, նույնպես և կոլխոզի ստուգված հաշվետարանների վերաբերյալ հաշվառքի հիման վրա:

«Գույքային արժեքների անունները» ձախ կողմը լրացնելու ժամանակ «դրամարկը», «արժեթղթեր, փայեր և ակցիաներ», «մթերքները և նյութերը, արտադրություն հիմնական միջոցները, անգործ գույքը՝ անավարտ շինարարությունը և կոլխոզին վճարելիք պարտքերը» բաժինների վերաբերյալ տվյալները վերցվում են գույքի ցուցակագրման հանձնաժողովի կողմից ստուգված, ընթացիկ հաշվառքի գրքերից և ցուցակներից: «Սերմեր և կեր» 5-րդ սյունյակի վերաբերմամբ մնացորդը ցույց կտա մինչև հունվարի 1-ը տնտեսության մեջ չողտագործված սերմերն ու կերերը:

11-ից մինչև 29-ը (աղյուսակի ձախ մասը) սյունյակները լցնելու ժամանակ անհրաժեշտ ենկատի ունենալ

հետևյալը. մինչև 1933 թ. 1/1-ն առկա ունեցած անասունները չեն վերադնատվում, այլ ցույց են տրվում այն գնահատման համաձայն, վորը գոյություն ունեն մինչև 1933 թ. 1/1-ը կամ համայնացման արձանագրությունների համաձայն: Սյդ իսկ արձանագրությունների համաձայն սահմանվում է 1933 թվին նոր համայնացված անասունների արժեքը:

Գերաճից ստացված և բարձր խմբեր փոխադրված անասունների գնահատումը կատարվում է պետական մթերման գներով, առանձին դեպքերում ուղղումներ մտցնելով բարձր վորակի ցեղային կենդանիների նկատմամբ: Կողմնակի կերպով ձեռք բերված անասունները գրանցվում են գնման գներով:

Դյուղատնտ. նշանակություն շինությունները, արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունների շենքերը, շարժիչները, գյուղատնտ. մեքենաները և այլն վերցվում են մինչև 1933 թվի 1/1-ը նրանց ունեցած գնահատման համաձայն: Նոր կանգնեցված շինությունները գնահատվում են պետական նորմաներով:

Մեխորատով կառուցվածքների արժեքը (18-րդ սյուն.), 18ա բազմամյա անկարանների թեյի պլանը (19-րդ սյուն.), այլ անկարանները (20-րդ սյուն.), ագրո-մեխորացիան (21-րդ սյուն.), հույնպես և անավարտ շինարարությունը (28-րդ սյուն.) և ազագա տարիների բերքի համար յեղած աշխատանքներն ու ծախսումները (29-րդ սյուն.) գնահատվում են պետական գներով գնահատող կատարված դրամական—նյութական ծախսումների գումարի համաձայն:

Ձի կարելի բույլ սալ գույքի վերագնահատում նրա բարձրացման կողմը, յեկամային փաստաթղթերով (համայնացման արձանագրություններով, գնման հաշիվներով և այլն) հիմնավորված արժեքի դիմաց, վորովհետև դա կհասցնի կոլխոզի միջոցների յեվ ժոնդերի մասին թյուր գաղափար կազմելուն:

«Գուլջային արժեքներ ստեղծելու աղբյուրները» աղյուսակի աջ կողմը լցնելու ժամանակ «փոխառվածությունների վերաբերյալ պարտքեր», «կոլխոզի պարտքերը զանազան հիմնարկություններին և անձերին» և «նպատակային սվանդները» բաժինները լցվում են ստուգման հանձնաժողովի կողմից ստուգված, ընթացիկ հաշվառքի գրքերի տվյալներով: «Հասարակական ֆոնդերի մնացորդը» բաժնի գումարները հաշվի յե՛ն առնվում ֆոնդերի հաշվառքի գրքի հիման վրա և պետք է ցույց տան հասարակական ֆոնդերի իսկական մնացորդը, մինչև 1934 թվի 1/1-ը: «Փայավճարներ» բաժինը լցվում է անդամների հաշվառքի գրքի համաձայն (ձև № 1), ընդ սմին՝ նախապես ցուցակն ստուգվում է և զտվում բոլոր գույքս յեկած անդամներից, վորոնց վերադարձվում է փայլ: «Մերմային և կերային ֆոնդեր» 13 և 14 սյունյակները պետք է ցույց տան 1933 թվի յեկամուտների բաշխման ժամանակ զատված ֆոնդերի չափը: «Մնձեռնմխելի ֆոնդ» բաժինը լցվում է «հատկացումներ յեկամուտներից» մասում կոլխոզի տարեկան հաշվետվությունների հիման վրա, «համայնացումից և անդամակցական վճարներ» մասում անդամների հաշվառքի գրքի համաձայն, ընդ սմին՝ այստեղ անհրաժեշտ է հետևել, վորպեսզի անճիշտ համայնացված և վերադարձված անասունների, ուր այդ տեղի յե ունեցել, արժեքը հանվի փայական և հիմնական անձեռնմխելի ֆոնդի համապատասխան մասերից: ընդ սմին «համայնացումից և անդամակցական վճարներ» 16-րդ տողում չի կարելի մուծել այն ֆայավճարները, վորոնք հաշվի յեն առնվում 12-րդ սյունյակում, պետությունից կոոպերատիվային, կուլակային և այլն մասում—գուլջի ցուցակների և այդ գուլջն ընդունելու արձանագրությունների համաձայն: «Գուլջի ցուցակագրմամբ սահմանված ներտնտեսական կուտակումներ» բաժնի վերջին մասը վորոշվում է վորպես տարբե-

րություն «ընդամենը գուլջ և արժեքավոր իրեր» (37-րդ սյուն.) աղյուսակի ձախ կողմի հանրագումարի և աղյուսակի աջ կողմի բոլոր թվարկված գումարների հանրագումարի միջև: Աղյուսակի աջ կողմում «գուլջի ցուցակագրմամբ սահմանված ներտնտեսական կուտակումներ» սյունյակում այդ գումարը գրանցելուց հետո ձախ և աջ կողմի վերջին հանրագումարներն իրենց գումարով պետք է հավասար լինեն միմյանց: Յեթե աղյուսակի հանրագումարները հավասարեցնելու ժամանակ ստացվի հակառակ դրություն, այսինքն՝ «ընդամենը գուլջ և արժեքավոր իրեր» աղյուսակի ձախ կողմի հանրագումարը փոքր լինի աղյուսակի աջ կողմի բոլոր հաշվառված գումարների հանրագումարից, ապա նրանց միջի տարբերությունը գրանցվում է աղյուսակի ձախ կողմում «արժեքավոր իրերի պակասը նրանց կազմվելու աղբյուրների դիմաց» (36-րդ սյունյակ) անվան տակ, վորից հետո կրկին պետք է ստացվեն աղյուսակի ձախ և աջ կողմի հավասար հանրագումարներ: Բայց հանրագումարների այդ հավասարեցումը պետք է անցկացնել միայն աղյուսակի ձախ և աջ մասի վերաբերյալ բոլոր գրանցումների մանրակրկիտ և մի քանի անգամ անցկացրած ստուգումից հետո: Գրանցումը 36-րդ սյունյակում (աղյուսակի ձախ մասի) և 21-րդ սյունյակում (աղյուսակի աջ մասի) կատարվում է միայն այն ժամանակ, յեթե իսկապես տեղի ունեցավ կուտակումների դրսեւորում՝ գուլջի ցուցակագրման ժամանակ կամ հայտնաբերված արժեքների պակաս: Ուստի ամբողջ աղյուսակի սյունյակներից վորևե մեկի սխալ լցնելն իրավունք չի տալիս լցնելու 36-րդ կամ 21-րդ սյունյակները, այլ պարտավորեցնում է զտնել և ուղղել թույլ արված սխալը:

Այսպիսով կոլխոզի կազմված տարեկան հաշվետվությունն ստորագրվում է կոլխոզի նախագահի ու հաշվետարի կողմից և ներկայացվում կոլխոզի վերաստուգիչ

Հանձնաժողովին՝ ստուգելու համար: Հաշվետվութեան այդ ստուգումից և վերատուգելի Հանձնաժողովի Նախագահի կողմից ստորագրվելուց հետո, հաշվետվութեանը ներկայացվում է ՄՏԿ (ՄՏԿ կողմից սպասարկվող կոլխոզներում) յեզրակացութեանը կամ Ռայհոդբաժնին (ՄՏԿ չսպասարկվող կոլխոզներում): ՄՏԿ կամ Ռայհոդբաժնի յեզրակացութեամբ հաշվետվութեանը ներկայացվում է կոլխոզի անդամների ընդհանուր ժողովին հաստատման համար:

Հ ա շ Վ Ե Տ Վ Ո Ւ Ք Յ Ա Ն Ո Ւ Պ Ո Ւ Մ Բ .

Նախ քան հաշվետվութեանը կոլխոզի անդամների ընդհանուր ժողովի, Ռայհոդբաժնի կամ ՄՏԿ հաստատմանը ներկայացնելը, կոլխոզի վարչութեանը և առաջին հերթին կոլխոզի նախագահը պետք է մանրակրկիտ ստուգեն հաշվետվութեանը:

Այդ ստուգումը պետք է յերաշխավորի հաշվետվութեան մեջ անճիշտ տեղեկութեաններ մտցնելուց: Կոլխոզի նախագահը պետք է հիշի, վաղ հաշվետվությունը հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ պետության կողմից կոլխոզի աշխատանքին հսկելու համար յեվ կոլխոզի իսկական դրության ամեն ճշտակ աղավաղման համար որեւի՞նչ պատասխանատու յեն կոլխոզի նախագահը յեվ վերաստուգիչ Հանձնաժողովը:

Անհրաժեշտ է նույնպէս վերացնել հաշվետվութեան մեջ թվաբանական սխալների հնարավորութեանը: Դրա համար կոլխոզի հաշվետարը և Ռայհոդբաժնի կամ ՄՏԿ հրահանգիչն ստուգում են հաշվետվութեանը, ընդ սմին՝ բացի եյապէս հաշվետվութեանն ստուգելուց, անհրաժեշտ է ստուգել գրանցումների ճշտութեանը նաև թվաբանական կողմից: Ընդ սմին՝ նրանք պետք է նկատի ունենան հետևյալ հիմնական պահանջները.

Աղյուսակ III: Կոլխոզի հողային ժողովը յեվ նրա ոգտագործումը.

«Ընդամենը հարմար հող» 7-րդ սյունյակը («Պիտանի հողմասերի տեսակները» բաժնում) հավասար է նրա մեջ մտնող 1-ից մինչև 6-րդը ներհաշված սյունյակների գումարին: «Ամբողջ հողային ֆոնդը» 9-րդ սյունյակը (այդ իսկ բաժնի) հավասար է «Ընդամենը հարմար հող» 7-րդ սյունյակը «անհարմար հող» 8-րդ սյունյակների գումարին:

Աղյուսակ IV: Աշխուրհի ծախսումները մի արում.

«Ընդամենը կոլխոզի վերաբերմամբ հաշվարկված և 1933 թվին» 16-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 1-ից մինչև 15-ը ներհաշված սյունյակների գումարին:

Աղյուսակ V: ՄՏԿ արտադրական սպասարկումը յեվ իրեն կոլխոզի կողմից կատարված աշխատանքները:

Յերկու սյունյակների թվանշանների գումարը պետք է ցույց տա կոլխոզում կատարված աշխատանքի ընդհանուր ծավալը:

Աղյուսակ VI: Անասուններ.

Մինչև 1933 թ. 1/1-ը յեղած անասունների առկայութեան վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն 1932 թվի տարեկան հաշվետվութեան մեջ կոլխոզի կողմից հաղորդված տվյալներին:

«Ընդամենը ձիեր» 6-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 1-ից մինչև 5-ը ներհաշված սյունյակների գումարին:

«Ընդամենը խոշոր յեղջյուրավոր անասուններ» 16-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 8-ից մինչև 15-ը ներհաշված սյունյակների գումարին: «Ընդամենը վոչխար-



ներ» 20-րդ սյունյակը հավասար է 17 պլյուս 19 սյունյակներին: «Ընդամենը խողեր» 28-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 22-ից մինչև 27-ը ներհաշված սյունյակների գումարին:

Կոլխոզի ֆերմաներում անասուններ լինելու դեպքում, պարտադիր կերպով հարկավոր է ստուգել [աղյուսակում— թվարկված են արդյոք այդ ֆերմաները 7-րդ կետում և զանցառում հայտնաբերելու դեպքում, անհրաժեշտ է լցնել այն:

Աղյուսակ VII: Կոլխոզի գույքը յեվ աղյուսակ IX: Շինություններ յեվ կառուցվածքներ:

Այդ աղյուսակները պետք է լցվեն գույքի ցուցակագրության տվյալներով, այսինքն՝ խիստ ստուգված տվյալներով:

Աղյուսակ VIII: Կոլխոզիկների անհասական ցանկերը յեվ ապահովվածությունը կովերով:

1, 3, 5, 6, 7 և 9 սյունյակների ցուցանիշները (անհատական ցանքեր, կովեր և այլն ունեցող կոլխոզիկների տնտեսությունների թիվը) չպետք է գերազանցեն «կոլխոզի ազգաբնակչությունը» II աղյուսակի «Կոլխոզում կան տնտեսություններ» 1-ին սյունյակին:

Աղյուսակ X: Բուսաբուծության արտադրանքը յեվ նրա բաշխումը:

«Ընդամենը հացահատիկային և բակլային» 12-րդ սյունյակը պետք է պարտադիր կերպով հավասար լինի նրա մեջ մտնող 1-ից մինչև 11-ը ներհաշված տողերի գումարին: «Փաստորեն հավաքված եր հեկտար» 5-րդ սյունյակը չը պետք է գերազանցի «Փաստորեն ցանված ե» 3-րդ սյուն-

յուս «1933 թվին համայնացված է ցանք» 4-րդ սյունյակների գումարին:

8-ից մինչև 17-ը ներհաշված սյունյակների գումարը պետք է հավասար լինի 6-րդ սյունյակին:

Աղյուսակ XI: Անասնաբուծության արտադրանքի բաշխումը:

Այդ աղյուսակում 4, 5, 6, 7 և 8 սյունյակների գումարը պետք է հավասար լինի 2-րդ սյունյակին:

Աղյուսակ XII: Դրամական յեկամուսները յեվ ծախսերը:

Աղյուսակը կազմվում է կոլխոզի հաշվեմատյաններից արած ընտրություններով:

Աղյուսակ XIII: Կոլխոզի ընդհանուր յեկամուսը յեվ նրա բաշխումը դրամական արահայտությամբ:

ա) Ցեկամտի աղբյուրները:

«Ընդամենը բուսաբուծության մթերքների ընդհանուր հավաքի արժեքը» 6-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 1-ից մինչև 5-ը ներհաշված սյունյակների գումարին: «Ընդամենն ընդհանուր շահույթ անասնաբուծությունից» 10-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 7-ից մինչև 9-ը ներհաշված սյունյակների գումարին:

«Ընդամենը յեկամուտ գյուղատնտեսությունից» 11-րդ սյունյակը պետք է հավասար լինի «Ընդամենը բուսաբուծության մթերքների ընդհանուր հավաքի արժեքը» 6-րդ սյունյակին պլյուս «Ընդհանուր շահույթ անասնաբուծությունից» 10-րդ սյունյակը:

«Ընդամենը յեկամատային ստացվածքներ» 19-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 11-ից 18-ը ներհաշված սյունյակների գումարին:

Բ) Յեկամտի բաշխումը.

«Ընդամենը ծախս այս հոգվածների վերաբերմամբ» 27-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 20-ից մինչև 26-ը ներհաշված սյունյակների գումարին: «Մնացորդ նախընթաց հոգվածները հանելուց հետո» 28-րդ սյունյակը հավասար է «Ընդամենը յեկամտային ստացվածքներ» 19-րդ սյունյակին մինուս «Ընդամենը ծախս այս հոգվածների վերաբերմամբ» 27-րդ սյունյակը:

«Ընդամենն արտադրական ծախսեր» 42-րդ սյունյակը հավասար է 29-ից մինչև 41-ը ներհաշված սյունյակների գումարին: «Ընդամենը ադմինիստրատիվ — վարչական ծախսեր» 46-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 43-ից մինչև 45-ը ներհաշված սյունյակների գումարին:

«Ընդհանուր յեկամտի մնացորդը բաշխման համար» 51-րդ սյունյակը հավասար է «Մնացորդ նախընթաց հոգվածները հանելուց հետո» 28-րդ սյունյակին մինուս «Ընդամենն արտադրական ծախսեր» 42-րդ սյունյակը մինուս «Ընդամենը կառավարչական ծախսեր» 46-րդ սյունյակը մինուս «Հատկացված է անձեռնմխելի ֆոնդին ընդամենը» 47-րդ սյունյակը մինուս «Հատկացված է հասարակական ֆոնդերին» 49-րդ սյունյակը:

«Այդ թվում հացահատիկ՝ գումարի» 52-րդ սյունյակը «Ընդամենը գումարի» 52-րդ սյունյակների գումարը սլյուս «Կարտոֆիլ՝ գումարի» 53-րդ սյունյակը սլյուս «Այլ մթերքներ» 54-րդ սյունյակը սլյուս «Իրամ» 55-րդ սյունյակի գումարը պետք է պարտադիր կերպով հավասար լինի «Ընդհանուր յեկամտի մնացորդը աշխուրների համաձայն կոլխոզիկների միջև բաշխելու համար» 51-րդ սյունյակին:

«Կոլխոզի յեկամտի բաշխմանը մասնակցել են» տրեստեսուլյուններ (60-րդ սյունյակ), աշխատունակներ (61-րդ սյունյակ), ազգաբնակչուլյուն (62-րդ սյունյակ) կետի ցուցանիշները չպետք է գերազանցեն II-րդ աղյուսակում

ցույց տված կոլխոզի տնտեսուլյուններին, աշխատունակների և ազգաբնակչուլյան բանակին:

Աղյուսակ XIV: Կոլխոզի գույքային հաշվեկեր:

«Գույքային արժեքավոր իրերի անունները» բաժին:

«Ընդամենը պարտքեր կոլխոզին» 34-րդ սյունյակը հավասար է նրա մեջ մտնող 30, 31, 32 և 33 սյունյակների գումարին:

«Ընդամենը գույքային արժեքավոր իրեր» 35-րդ սյունյակը հավասար է 1-ից մինչև 29-ը ներհաշված սյունյակների գումարին, սլյուս 34-րդ սյունյակը: «Ընդամենը» 37-րդ սյունյակը հավասար է 35-րդ սյունյակին, սլյուս 36-րդ սյունյակը:

«Ընդամենը գույքային արժեքավոր իրեր» 37-րդ սյունյակը պարտադիր կերպով պետք է հավասար լինի «Ընդամենը» (աշ կողմի) ներքին սյունյակին:


«Գույքային արժեքների ստեղծման աղբյուրները» բաժին:

«Ընդամենը պարտքեր» 4-րդ սյունյակը հավասար է 1, 2 և 3 սյունյակների գումարին:

«Ընդամենը հասարակական ֆոնդեր» 11-րդ սյունյակը հավասար է 7, 8, 9 և 10 սյունյակների գումարին:

«Ընդամենն անձեռնմխելի ֆոնդ» 18-րդ սյունյակը հավասար է 15, 16 և 17 սյունյակների գումարին:

«Ընդամենը միջոցներ ստեղծվելու աղբյուրներ» 20-րդ սյունյակը հավասար է «Ընդամենը պարտքեր» 4-րդ, սլյուս «Ընդամենը հասարակական ֆոնդեր» 11-րդ սյունյակը, սլյուս «Ընդամենն անձեռնմխելի ֆոնդ» 18-րդ սյունյակը, սլյուս «Մինչև 1933 թ. 1/I-ը գույքի ցուցակագրման



«*Հրահրված ներանոտեսական կուտակումներ*» 19-րդ սյուն-
յակը — սյունյակների գումարին:

«*Հնդամներ*» սյունյակը հավասար է «*Հնդամներ մի-
ջոցներ ստեղծվելու աղբյուրներ*» 20-րդ սյունյակին սլյուս
«*Փուլքի ցուցակագրմամբ սահմանված հաշվետվական տար-
վա ներանոտեսական կուտակումներ*» 21-րդ սյունյակը:



24.576

807

1299

657

h-11